

Արման Սասունի Դաղունց, դոցենտ, փ. գ. թ.

Մերի Սամվելի Մակունց, ասպիրանտ
ՀՊՏՀ

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԵՎ ԿԱՄԱԿՈՐ ՁԵՎԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ապահովագրության նշանակությունը կարևորվում և արդիականությունն աճում է հատկապես տնտեսական ճգնաժամերի և տնտեսության կառուցվածքային վերափոխումների ժամանակահատվածում՝ պայմանավորված տարբեր ոլորտների ռիսկայնության ու անորոշության բարձրացմամբ: Ասվածը բնորոշ է նաև Հայաստանի Հանրապետությանը, որտեղ համակարգային ռիսկերի զսպման ու կառավարման գործում նշանակալի դեր կարող են խաղալ ապահովագրական մեխանիզմները:

Թեև զարգացած տնտեսություն ունեցող երկրներին բնորոշ ապահովագրության համակարգի մասին ՀՀ-ում խոսելը և դրա հետ զուգահեռներ տանելը տեղին չէ¹, այդուհանդերձ, արդեն իսկ կարող ենք արձանագրել, որ հասարակության և պետական շրջանակներում բավականաչափ անրապնդվել են ապահովագրության դերակատարման և անհրաժեշտության պատշաճ գիտակցումն ու լուրջ նախադրյալներ ստեղծվել համակարգի հետագա զարգացման համար: Այսինքն, ապահովագրական համակարգի կայացման փուլը մեր երկրում կարծես թե ավարտվում է, և առկա են բոլոր անհրաժեշտ նախադրյալները դրա հետագա զարգացման համար: Մինևույն ժամանակ հարկ է ընդգծել, որ համակարգի զարգացման ներկա մակարդակի առումով, ի թիվս այլ հանգամանքների, էական նշանակություն է ունեցել երկրում պարտադիր ապահովագրության դեռևս միակ ապահովագրության տեսակի՝ «Երրորդ անձանց նկատմամբ ավտոսեփականատերերի պատասխանատվության պարտադիր ապահովագրության» (ԱՊՊԱ) ներդրումը²: Այն ոչ միայն բարձրացրել է հասարակության իրավագիտակցությունն ու ապահովագրության վերաբերյալ տեղեկացվածությունը, այլև՝ զգալիորեն բարելավել շուկան բնութագրող հիմնական ցուցանիշ-

¹ ՀՀ ապահովագրական շուկան բնութագրող ցուցանիշները զարգացման առումով բավականին հետ են մնում արևմտյան երկրների ապահովագրական շուկաները բնութագրող համապատասխան ցուցանիշներից:

² «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության» մասին ՀՀ Օրենքը (ՀՕ-63-Ն, ընդունվել է 18.05.2010թ-ին, ուժի մեջ է մտել 26.06.2010 թ-ին գործում 01.01.2011թ-ից):

ները՝ համախառն ապահովագրավճար, ապահովագրական հատուցումներ, կնքված պայմանագրերի քանակ, ՀՆԱ-ում ապահովագրության մասնաբաժին, բնակչության մեկ շնչին ընկնող ապահովագրավճար և այլն: Այսպես, եթե 2010թ-ի արդյունքներով ՀՀ ապահովագրական շուկայի համախառն ապահովագրավճարները կազմել են 8,2 մլրդ դրամ, իսկ ապահովագրական հատուցումները՝ 1,7 մլրդ դրամ, ապա 2011 թ-ի արդյունքներով արդեն հիշյալ ցուցանիշները կազմել են՝ համապատասխանաբար 22,3 մլրդ դրամ և 8,1 մլրդ դրամ, իսկ 2014թ-ի արդյունքներով՝ 30,2 մլրդ դրամ և 22,2 մլրդ դրամ, որոնց մեջ մեծ մասը բաժին է ընկել հենց ԱՊՊԱ համակարգին:

Աղյուսակ 1

ՀՀ ապահովագրական շուկան բնութագրող առանձին ցուցանիշների վերլուծությունը 2008-2014 թվականների արդյունքներով՝ մլնդ ռամներով

Ցուցանիշներ	2008	2009	2010	2011	2012	2013	2014
Պայմանագրերի քանակ (հատ)	48,781	50,646	51,531	681,580	857,250	978,846	1,087,355
Ապահովագրավճարներ ³	7,769.1	8,102.6	8,253.4	22,363.6	35,185.6	34,088.9	30,200.1
Այդ թվում՝ ԱՊՊԱ	0	0	0	14,804.2	15,130.9	16,131.9	17,800.2
Վերաապահովագրավճար	3,968.6	4,035.9	4,010.5	2,909.8	3,208.1	3,250.9	3,599.9
Ապահովագրական հատուցումներ	1,375.0	1,900.7	1,745.6	8,070.0	14,486.7	19,718.7	22,149.7
Այդ թվում՝ ԱՊՊԱ	0	0	0	5,654.7	9,346.1	10,339.9	9,791.5
Վերաապահովագրողի բաժինը հատուցումներում	554.0	890.6	535.1	681.6	784.3	819.6	6,578.2
Բնակչության մեկ շնչին ընկնող ապահովագրավճարը ⁴	2,402	2,498	2,535	6,842	11,635	11,280	10,033
Ապահովագրավճարների բաժինը ՀՆԱ-ի մեջ (%)	0,22	0,26	0,24	0,59	0,88	0,8	0,67

³ Հաշվեգրված ապահովագրավճարների կառուցվածքում 2012 և 2013 թվականներին համապատասխանաբար 10.5 մլրդ և 8.4 մլրդ դրամ են կազմել բյուջետային աշխատակիցների առողջության ապահովագրության գծով հաշվեգրված ապահովագրավճարները, որոնք սակայն 2014թ-ից սկսած չեն իրականացվում:

⁴ ՀՀ ԱՎԾ «Հայաստանի ազգային հաշիվներ» ժողովածուներ 2003թ., 2006թ., 2009թ., 2011թ., 2015թ., էջեր 18-25:

Աղյուսակում բերված տվյալները, ինչպես նաև համաշխարհային ապահովագրական շուկայի ուսումնասիրությունները վկայում են, որ անցումային տնտեսություն ունեցող երկրներում, որտեղ դեռևս զարգացած չէ ապահովագրական մշակույթը, ցածր է հասարակության կենսամակարդակը, բացակայում են ապահովագրական բազմազան ծառայությունները՝ համակարգի զարգացման առաջնային խթաններից է պարտադիր ապահովագրության ներդրումը: Հետևաբար, կարծում ենք, որ ՀՀ-ում կարող է էական ազդեցություն ունենալնաև, օրինակ՝ կառուցապատողի պատասխանատվության, բժշկական, գյուղատնտեսական ռիսկերի և այլ պարտադիր ապահովագրության տեսակների ներմուծումը, որոնց վերաբերյալ արդեն իսկ որոշակի քայլեր⁵ են ձեռնարկվում, և բացառված չէ, որ առաջիկա տարիներին դրանց մի մասի ներդրումն իրականություն դառնա: Այս առումով օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել կամավոր և պարտադիր ապահովագրության տեսակների հիմնական սկզբունքներն ու առանձնահատկությունները:

Այսպես, միջազգային պրակտիկայում տարածված ապահովագրական գործունեության դասակարգման մի շարք չափանիշներից ու սկզբունքներից է *ապահովագրության ձևից* կամ *իրավական հատկանիշից* կամ *ապահովագրության պայմանագրի կողմերի կամարտահայտությունից* կախված դասակարգումը, ըստ որի, ապահովագրությունը բաժանվում է *կամավոր և պարտադիր* եղանակների⁶: Ընդ որում, այս դասակարգումը տարածվում է ապահովագրության բոլոր ճյուղերի և ենթաճյուղերի վրա:

Պարտադիր ապահովագրությունն իրականացվում է գոյություն ունեցող օրենսդրությամբ սահմանված չափանիշների համաձայն, որի իրականացման կարգն ու պայմանները սահմանվում են վերջինիս վերաբերյալ ընդունված առանձին օրենսդրական ակտերով: Համապատասխան ապահովագրատեսակի ընդունումը պայմանավորված է հասարակական նպատակահարմարությամբ ու անհրաժեշտությամբ և իրականացվում է ամբողջ բնակչության կամ նրա մի մասի անձնական և գույքային շահերի պաշտպանու-

⁵ Մշակվել է «Կառուցապատողի քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի նախագիծ, ՀՀ կառավարության նախաձեռնությամբ ՀՊՏՀ-ում ձևավորվել է ազրոապահովագրության խնդիրներն ուսումնասիրող գիտական խումբ, որը պետք է համապատասխան հայեցակարգ ներկայացնի կառավարությանը և այլն:


⁶ «Страхование» А. М. Годин, С. В. Фурмина, Издательско-торговая корпорация «Дашков и К», 2008-480с.

թյունն ապահովելու նպատակով՝ պետությանը հնարավորություն ընձեռելով որոշ ռիսկերի տեսակների գծով վնասների ֆինանսական պատասխանատվությունը հատուցել ապահովագրության միջոցով: Միջազգային իրավունքը պարտադիր ապահովագրության տեսակների ներդրումը հիմնավորում է երրորդ անձանց շահերի պաշտպանության անհրաժեշտությամբ: Տարածված են ֆիզիկական և իրավաբանական անձանց գործունեության բարձր վտանգավորության աղբյուրների հետ կապված ապահովագրության տեսակները⁷: Ապահովագրության պարտադիր ձևը կամավորից տարբերվում է նրանով, որ պոտենցիալ ապահովադիրի մոտ առկա է ապահովագրություն իրականացնելու (պայմանագիր կնքելու) օրենքով սահմանված պարտավորություն, իսկ ապահովագրողները մրցակցում են այդ պարտավորությունն իրենց ընկերության միջոցով իրականացնելու համար: Պարտադիր ապահովագրության գլխավոր չափանիշներից է վերջինիս համընդհանրությունը, ինչը ենթադրում է, որ օրենքում ամրագրված բոլոր նմանատիպ սուբյեկտները պարտավոր են կնքել ապահովագրության պայմանագրեր:

Ապահովագրության պարտադիր ձևը հիմնվում է որոշակի սկզբունքների վրա (տես գծապատկեր 1)։

Գծապատկեր 1

Պարտադիր ապահովագրության սկզբունքները



⁷ Աշխարհում ամենատարածվածը ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերի քաղաքացիական պատասխանատվության պարտադիր ապահովագրությունն է:

1. *Պարտադիր լինելու սկզբունքը* ենթադրում է, որ ի տարբերություն կամավոր ապահովագրության տեսակների^ա այս դեպքում ապահովագրության իրականացման համար ապահովադիր և ապահովագրողի նախնական համաձայնության անհրաժեշտություն չի առաջանում, որովհետև պարտադիր ապահովագրությունը սահմանվում է օրենքով, համաձայն որի ապահովագրողը պարտավոր է ընդունել օբյեկտն ապահովագրության, իսկ ապահովադիրը՝ վճարել համապատասխան ապահովագրավճար:

2. *Ապահովագրության օբյեկտների համբողջական ներգրավվածության (ընդգրկվածության) սկզբունքի համաձայն* ապահովադիրը պարտավոր է ապահովագրել պարտադիր ապահովագրության ենթակա բոլոր օբյեկտները, իսկ ապահովագրողը՝ դրանք ապահովագրել: Այդ պատճառով պարտադիր ապահովագրության համակարգերի նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինները, որպես կանոն, յուրաքանչյուր տարի ամբողջ երկրում իրականացնում են ապահովագրված օբյեկտների գրանցում և ստուգում:

3. *Ինքնաշխատության սկզբունքը* տարածվում է օրենսդրությամբ նշված բոլոր ապահովագրության օբյեկտների վրա: Ապահովադիրը պարտավոր չէ ապահովագրական մարմիններում հայտարարել պարտադիր ապահովագրության ենթակա օբյեկտի մասին: Տվյալ գույքը ինքնաշխատ կերպով ներառվում է ապահովագրության ենթակա օբյեկտների ցանկում:

4. *Պարտադիր ապահովագրության գործողության սկզբունքի* համաձայն, եթե ապահովադիրը ամբողջ ապահովագրավճարները կամ դրանց մի մասը ժամանակին չի վճարել, ապա չվճարված գումարները նրանից գանձվում են դատական կարգով: Ապահովագրված գույքի վնասման կամ կորստի դեպքում ապահովագրական հատուցումը վճարվում է ապահովագրավճարի չվճարված չափը մաս հանելուց հետո:

5. *Անժամկետայնության սկզբունքը* հիմնվում է այն հանգամանքի վրա, որ պարտադիր ապահովագրության օբյեկտը ապահովագրվում է օգտագործելու ամբողջ ժամանակահատվածի ընթացքում, այսինքն՝ սկզբունքը գործում է մշտապես, քանի դեռ ապահովադիրը օգտվում է ապահովագրված գույքից:


6. *Ապահովագրական ապահովվածության նորմավորման սկզբունքի համաձայն* ապահովագրության ենթակա գույքի զնահատման (ապահովագրական արժեքի որոշման) և ապահովագրական հատուցումների իրականացման մեխանիզմների պարզեցման նպատակով սահմանվում են մեկ օբյեկտի գծով ապահովագրական զնահատման տոկոսային կամ բացարձակ արտահայտությամբ ապահովագրական ապահովածության նորմեր:

Բացառությամբ անժամկետայնության սկզբունքի՝ թվարկված մյուս սկզբունքները լիովին համապատասխանում են անձնական ապահովագրության պարտադիր տեսակներին:

Կամավոր ապահովագրություն իրականացվում է ապահովագրողի (ապահովագրողների միության) կողմից օրենսդրության (<<-ում՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» օրենքի և այլ

նորմատիվ ակտերի) պահանջներով կազմված և հաստատված ապահովագրության կանոնների⁸ հիման վրա՝ ապահովագրողի և ապահովադրի միջև կնքված ապահովագրության պայմանագրով: Ապահովագրության կամավոր ձևը հիմնված է ստորև՝ գծապատկեր 2-ում նկարագրված սկզբունքների վրա:

Գծապատկեր 2



1. *Մասնակցության կամավոր սկզբունքը* երաշխավորում է ապահովագրության պայմանագրի կնքում ապահովադրի առաջին իսկ (նույնիսկ բանավոր) պահանջով և ցանկությամբ: Այն առավելապես տարածվում է ապահովադրի վրա, քանի որ ապահովագրողը չի մերժի ապահովագրության պայմանագրի կնքման ապահովադրի ցանկությունը, եթե ներկայացված պայմաններն ու պահանջները չեն հակասում իր հաստատած ապահովագրության պայմաններին և կանոններին:

2. *Ընտրանքային ընդգրկվածության (ներգրավվածության) սկզբունքը* պայմանավորված է նրանով, որ ոչ բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձ ապահովադիրներն են ցանկանում մասնակցել ապահովագրական հարաբերություններին: Բացի դրանից, ապահովագրության պայմաններով կարող են սահմանվել նաև ապահովագրության պայմանագրի կնքման հետ կապված ապահովադիրների և ապահովագրված անձանց սահմանափակումներ (օրինակ՝ տարիքային, առողջական վիճակի և այլն):

⁸ ՀՀ-ում ապահովագրության պայմանները կամ կանոնները սովորաբար հաստատվում են ապահովագրական ընկերությունների խորհուրդների կողմից:

3. *Սահմանափակ ժամկետի սկզբունքի* էությունը նրանումն է, որ ապահովագրության պայմանագրի սկիզբը և վերջը հստակ համաձայնեցվում է պայմանագրում: Ապահովագրական գումարի սահմաններում ապահովագրական հատուցում վճարվում է միայն այն դեպքում, եթե ապահովագրական պատահարը տեղի է ունեցել ապահովագրության պայմանագրի գործողության ժամանակահատվածում:

4. *Ապահովագրավճարի մուծման միանվագ կամ տարաժամկետ սկզբունքը* սահմանում է, որ ապահովագրության պայմանագրի գործողության մեջ մտնելը կամ գործողության շարունակականությունը պայմանավորված է միանվագ կամ ապահովագրավճարի առաջին մասի վճարման հանգամանքով: Ապահովագրավճարի հերթական մասի չվճարումը, որպես կանոն, հանգեցնում է պայմանագրով սահմանված ապահովագրողի ստանձնած պարտավորությունների դադարեցմանը:

5. *Ապահովագրական ապահովվածության սկզբունքի* վրա հիմնվում է ապահովագրական գումարի մեծությունը կամ ապահովագրական հատուցման չափը: Գույքային ապահովագրության դեպքում ապահովադիրնիր ցանկությամբ է որոշում ապահովագրական հատուցման չափերը, որոնք սակայն պետք է լինեն գույքի ապահովագրական գնահատման (ապահովագրական, իրական արժեքի) չափի շրջանակներում: Նման սահմանափակումներ չկան անձնական ապահովագրության մեջ, որտեղ ապահովագրական գումարը սահմանվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Գրականություն

1. «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության» մասին ՀՀ Օրենքը (ՀՕ-63-Ն, ընդունվել է 18.05.2010 թ-ին, ուժի մեջ է մտել 26.06.2010 թ-ին գործում 01.01.2011 թ-ից):
2. Ավետիսյան Վ.Հ., Դաղունց Ա.Ս., Հակոբյան Մ.Գ., «Պարտադիր բժշկական ապահովագրության համակարգի ներդրման ուղիները Հայաստանի Հանրապետությունում»: Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն 2010, 126 էջ:
3. «Страхование» А. М. Годин, С. В. Фурмина, Издательско-торговая корпорация «Дашков и К», 2008-480с.
4. ՀՀ ԱՎԾ «Հայաստանի ազգային հաշիվներ» ժողովածուներ 2003թ., 2006թ., 2009թ., 2011թ., 2015թ., էջեր 18-25:

АННОТАЦИЯ

**Арман Дахунц, к.э.н.
Мери Макунц, аспирант**

ОСОБЕННОСТИ ДОБРОВОЛЬНЫХ И ОБЯЗАТЕЛЬНЫХ ФОРМ СТРАХОВАНИЯ

Данная статья относится к основным принципам и особенностям обязательных и добровольных форм страхового покрытия. Исследования показывают, что в странах с переходной экономикой одним из стимулов развития системы является внедрение обязательного страхования. В РА также система ОСАГО, на уровне как государства, так и общественности, в достаточной степени укрепил осознание необходимости и роли страхования, значительно улучшил характеризующие рынок основные показатели. Таким образом, перед тем как внедрять другие виды обязательного страхования, необходимо изучать особенности обязательных и добровольных форм страхования.

Одним из основных критериев обязательного страхования является ее универсальность, которое подразумевает, есть для всех похожих субъектов состав контракта должно быть определен законом, в отличие от добровольного страхования, где оно определяется в согласии между страховщиком и страхователем.

ANNOTATION

**Arman Dag Hunts, PhD
Meri Makunts**

THE PECULIARITIES OF COMPULSORY AND VOLUNTARY INSURANCE FORMS

The article elucidates the main features and principles of the compulsory and the voluntary insurance forms. The research has shown that the investment of the compulsory insurance is a stimulus for the insurance market development of the countries having transitional economy. The compulsory motor insurance has strengthened its role and necessity both in the society and in the government of the RA and essentially improved the main indicators describing the insurance market. Thus, it is important to investigate the peculiarities of the compulsory and voluntary insurance forms before investing another form of the compulsory insurance.

Unlike the voluntary insurance which is based on the agreement of two parties: the insurer and the insured, the compulsory insurance is universal for everybody, so it is obligatory for any person to sign an insurance contract/defined by law.